

ՇԱՐԽԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԵՐ:

Տարեկան գինն է 7 րուբլի (փոստի ծախսով): Օտարաքաղաքացի բաժանմանը պիտի գրվեն այս հասցեով. Вѣ Тифлисѣ. Въ Редакцію Армянской Газеты „Месакъ“.

Փոխարկում կարելի է ստորագրել խորագրատան մէջ (սրբուհու տուն) և խմբագրի ընթերցարանում:

ՄԵՍԿԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տալի տողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Գայտարարութիւնները տպւում են չափերէն, խոսքերէն, վրացերէն, քրեականէն, գերմաներէն և փոքրերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԽԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Կրօնական մշտողը գրականութեան մէջ:—Ներքին տեսութիւն: Վերջին աշխարհը: Նամակ խորագրով: Ներքին լուրեր:—Կատարատեսական ժամանակագրութիւն:—Սրբաբնիկ լուրեր:—Մասնաւոր գրութիւն:—Բանասիրական: Մագիստրի հարսնիք:—Խառն լուրեր:—Ֆէլիէտոն:—Ցայտարարութիւններ:

ԿՐՈՆԱԿԱՆ ՄԵՏՈՂԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ամեն յայտնի է որ հին հայոց մասաւոր շարժողութիւնը սկսում էր քրիստոնէութեամբ. առաջին ուսումնարանները բացուեցան Հայաստանում Գրգոր զարուհի Գրիգոր Լուսաւորի խնամքով և Տրդատ Թագաւորի ձեռննորոգութեամբ: Մինչև այն ժամանակ Հայաստանը ունէր միայն մարդարաններ, որոնց նպատակն էր մարմինը կրթել և ոչ միտքը, նիւթական զօրութիւն պատրաստել և ոչ բարոյական, գիտութիւններ և ոչ բարգաւաջիք:

Քրիստոնէութեամբ սկսում է նոյնպէս Հայոց գրականութիւնը: Հիւսիսային Հայաստանի գրականութեան հայ ժողովրդի մասաւոր արգիւնները պարունակում էին լոկ աղբայրի գիւցազունների վրայ հիւսուած երգերի ու զբոյցների մէջ. Ժողովրդի միակ դաստիարակները աղբայրի երգիչները կամ, ինչպէս որ հնէրը ասում էին, «վեպասաններ» էին, որոնց մի քանի հատուկոր երգերը պահպանել և մինչև մեզ է հասցրել քրիստոնէական գրականութիւնը:

Որքան մի կողմից ապշեցնում է մեզ հիւսիսային Հայաստանի գրական անշարժութիւնը:

ՖԵԼԻԷՏՈՆ

Որքան մի կողմից ապշեցնում է մեզ հիւսիսային Հայաստանի գրական անշարժութիւնը:—Գրիգոր զարուհի Գրիգոր զարուհի:—Սրբաբնիկ լուրեր:—Մասնաւոր գրութիւն:—Բանասիրական: Մագիստրի հարսնիք:—Խառն լուրեր:—Ֆէլիէտոն:—Ցայտարարութիւններ:

Իս որ էրէկուայ պէս անցկացաւ, եզուց էլ էս օրուանը կը կրկնուի: Կեսնը չկայ, շարժողութիւն չկայ, լուր չկայ:

Եսպէս են ասում շատերը, աղբիւ ընթերցող. Բայց եղպէս չեմ ասում ես, քու խոսքի ծառան, թափառական Զարուհի:

Իսկ եթէ մի ուրիշ մարդ հարցնէր ինչպէս էդ շատ երիւն, էնպէս էլ ինձ, թէ ո՞վ է մտղանից զրուստը, նրանք կը պատասխանէին մենք, ես էլ կը պատասխանէի ես:

Շատերի համար, էր էկ ուայ օրը էս օրուայ պէս է թուում նրա համար, որ իրանց չափազանց բարեբաղնութեամբ, էրէկուայ իրանց վնասողի վարմունքը մոռանում էին. ու սրբազան սառնահոգութեամբ, էս օրուայ պատահած անցքի ժամանակը, աչքերը փակում են յու ակամաններին էլ բռնակ են դնում:

Էդ խոսքն անուշաղբութիւնիցն է, որ գալին—գառն են համարում, աղբարին—տխրակ, ու անբանին—գործունեա կարծում:

Բայց ես եղպէս չեմ:

Ինձ համար ամենազարեկն բանն էլ մեծ նշանակութիւն ունի: Ամենահասարակ բանն էլ որ տեսնում եմ զայլ աչքերով եմ նայում, ու ասում եմ զԼեւոն զուտ տալ հետեւել անյիմաստ խրատները: Ոչինչ բան չէ չէն մի համարել, եթէ չես ու—

նր, այնքան աւելի զարմացում է քրիստոնէայ Հայոց մասաւոր շարժողութիւնը, մանաւանդ տառերի գիւտից յետոյ, այսինքն հինգերորդ դարու սկզբում: Լուսաւորութեան կարօտ Հայը, երկարատե քնից սթափելուց յետոյ, զգում է իր մասաւոր խեղճութիւնը և չնայելով իր առաջ եկած արգելքներին՝ բեռը ուսին շալակած, քաղցած, ծարաւ, բուսիկ դիմում է Հայաստանից դուրս իր բարոյական ծարաւը կործակել: Արեւմտեան լուսաւորութիւնից խորշող ու ինքն իր մէջ կենդանացած փակ կեանք վարող ազգը կարծես կամենում է ամբողջ Յունաստանը Հայաստան փոխադրել:

Այս զարմանալի և անօրինակ գործունէութեան շարժառիթը եղաւ, ինչպէս ասացինք քրիստոնէութիւնը, իսկ շարժիչները Աւետարանի լոյս տարածող հոգեւորականները: Հոգեւորական դասը իր կրթութեամբն ու բարոյական արժանաւորութիւններով հասարակութեան նշանաւոր մասը կազմելով, աղբայրի լուսաւորութեան ձեռնուռ եղան: Ամէն բանից աւելի քրիստոնէութեան հաստատունուն և ժողովրդի հոգեւոր պիտոյքը հոգաւոր փոյժ ունենալով, աղբի մասաւոր շարժողութեանը կրօնական ուղղութիւն տուին: Իհարկէ այս կրօնական ուղղութիւնը գրականութեան մէջ էլ պիտի երևար, որի ներկայացուցիչները նոյն հոգեւորականներն էին: Սոցա զիսաւոր նպատակը լինելով քրիստոնէութեան մտքերը տարածել, մուսայան միւս գրականական նպատակները և իրանց բոլոր տաղանդն ու կարողութիւնը գործ

գում որ ինքը չը ոչինչ անաս: Էդ հնչին բաները օձի պէս սողում են ոտից տակով, մի օր կը կծեն քեզ, զգալ կայ: Դրանք ինքստ ինքստ ունիւն են, բայց մեր կեանքի բարեխաղութեան շատ պայմանները, էդ ոչինչն էր ից են կախուած: Ի՞նչ իմանաւ, որ էս օրուայ լուր չափ անցքը, եղաւ ուղտի հետեանք կը յառաջանի:

Ես մի մեղաւոր մարդ եմ, պակասութիւններով լիւր:

Իմ առաջին պակասութիւնս էն է, որ օրինակ աւանելով անխելք ճշմարտախօսներին, իմ մեղքս իմ բերանովս եմ պտտում:

Իհարկէ, եղպէս վարուելով թէ և ինձ իրաւունք եմ տալի որ յետոյ էլ զու պակասութեան վերայ խօսեմ, բայց ցաւալին էն է, որ զու չը հասկանալով իմ էդ խորամանկ դիտաւորութիւնս, կարծուան թէ յետոյ գլխումս խելք չը լինելուցն է որ եղպէս եմ վարվում:

Օրինակ ասեմ որ հաւատաս: Տեսնում ես, հենց էս մին քանի տողի մէջ, թէ և ինձ համար ասի թէ խորամանկ ու մեղաւոր մարդ եմ, բայց զրանով քեզ էլ կարողացայ ասել թէ զու էլ անհեռատես և անհասկացող ես:

Ես յիմար օրինակն էլ էստուր համար բերի, որ կարողանամ քեզ ասել հետեւալ իրաւացի զրպարտութիւնը բարեհոգի անպիտանների համար:

«Շատ անգամ իմաստուն կեղծաւորները վատաբանում են իրանց անձը անգամ չէ թէ նրա համար, որ իրանց զրկւոր պարսակը շատ է դուր գալի, այլ նրա համար, որ աչքից վրայ վառադրը քաշին, ճշմարտասէր երևան, որ յետոյ իրանց ասինքն կեղծաւորութիւնները հեշտ զրկւոր բանն էն:»

Հիմի խոստովանիմ երկրորդ պակասութիւնս:

զրին զիսաւորապէս աստուածաբանական գրեւորները գրելու, քարոզներ, սաղմոսի ու ժամագրքի մեկնութիւններ, զովասանական ու զամբանական ծառեր և այլն: Գրականութեան միւս ճիւղերն էլ մնացին միեւնոյն նեղ շրջանի մէջ, բանաստեղծութիւնը հոգեւոր երգերի (շարականների) մէջ, փիլիսոփայութիւնը կրօնական վէճերի մէջ, աստղաբանական գիտութիւնը և ժամանակագրութիւնը տօնացոյցների մէջ: Նոյն իսկ Հայաստանի քաղաքական պատմութիւնը գրող մասնագրների գրածներում ուղղակի բարոյական ու կրօնական հասցեք է երևում. քաղաքական խնդիրների պատճառները ու հետեւեքները քննելու տեղ, նորա սովորաբար սաղմոսի, մարգարէների ու Աւետարանի վկայութիւնները մէջ բերելով բաւականանում են և ամէն բանի մէջ առ հասարակ նախախնամութեան մասը տեսնում:

Սակայն Հայոց գրականութիւնը այս բանում բացառութիւն չէ կազմում: Բոլոր այն ազգերը, որոնց մէջ քաղաքակրթութիւնը քրիստոնէութեամբ սկսաւ, միեւնոյն ճանապարհով գնացին, բայց մեզանից աւելի յաջող հանգամանքների մէջ գտնուելով վաղ թէ ուշ յաջողեցան այդ գրութիւնից ազատուիլ և ժողովրդական կեանքի վրայ հիմնուած ազգային գրականութիւն առաջացնել: Հայոց ազգը դժբաղդաբար իր մասաւոր շարժողութեան առաջին քայլափոխումն արգէն քաղաքական կեանքից զրկուելով՝ շարունակեցաւ ապրել կրօնական կեանքով. գրականութիւնն էլ մնաց միեւնոյն կրօնա-

Ամենահասարակ բանին էլ եմ գալի աչքերով եմ նայում:

Ես պակասութիւնս էլ չէ թէ նրանիցն է որ ընտելութիւնը չար եմ ստեղծված, այլ նրանից, որ շատ տխուր պարագայում եմ ջուկել ինձ համար, այն է թափառել:

Իմ թափառական կեանքն է մեղաւոր, որ քեզ համար ճանձի նշանակութիւն չունեցող առարկան ինձ համար գոմէի նշանակութիւն ունի:

Մին քանի օրինակներ ասեմ:

Նորերումս մեծապատիւ Խնամակալեանցը յանձնեց 14 մանէթ իր տան գործերը կատարող ծառայ Բարի-պտուղին, որ այնինչ երեկին տալ էր փողերը, իր ուսման ամենահարկաւոր կարիքը հոգաւ համար:

— Ճշմարիտ է, ասաւ Բարի-պտուղը երեկին, Խնամակալեանցի քեզ յանձնեցու 14 մանէթը ինձ մօտ է գտնուում, բայց ես քեզ չեմ տալ, հօրդ ասա որ նա դալ:

— Հայրս չի կարող դալ:

— Ինչի, միթէ հիւանդացաւ:

— Ոչ, մուսա... ասաւ երեկին քեզի ձայնը կրկնապատկելով:

— Երբ:

— Ես օր:

— Ես օր, ափսոս մարդ:

— Գնալով մոկումը աւելացրեց:

— «Ափսոս իմ փողեր:»

— Գնալով երկաթին ասեց:

— Քու հայրդ երկար ժամանակ է որ ինձ օղտը մանէթ փող է պարտ. հարկւր անգամ ուղիւ եմ, միշտ երգուել թէ չունիմ: Հիմի էս օրու մանէթը հօրդ պարտքում վերցնելով ես հետապնդում եմ նրալ հողին արքայութիւնն գնալու միջոցը:

կան նեղ շրջանի մէջ մինչև համարեա նոր ժամանակներու:

Տարակոյ չկայ որ այս ուղղութեան համեմատ պիտի լինէր և դարձեալ կրթութիւնը, որի մէջ տիրապետում էր վարդապետական չոր ու ցամաք ձեւ բոլոր միջին և նոր դարերումը, տեղ տեղ էլ մինչև այս օրուան օրս: Սորին դասատներումը հերերէնը, փոքր սաղմոսը, մեծ սաղմոսը, ժամագրքը և վերջապէս նորիկը մեքենաբար կարդացվում էին՝ առանց մի բան հասկանալու, յետոյ դալիս էր քերականութիւնը, ճարտասանութիւնը և տրամաբանութիւնը, որոնք անգիր սերտվում էին նոյնպէս առանց հասկանալու. միով բանի մեքենաբար սկսում էր դարձեալ կրթութիւնը և մեքենաբար աւարտվում: Ուսանողը ուսումնասիրելուց դուրս էր բերում անկապ բառերու ձեւեր, բայց ոչ մի կենդանի միտք. ոչինչ բանի վրայ գաղափար չունէր, բայց նորա ինքնահաւատութեան չափը չը կար, ամէն տեսակ նիւթերի վրայ գրելու ձեռնամուկ էր լինում, այն էլ միշտ ճառական ձեւով, ճարտասանութեան մէջ աւանդուած կանոնների համաձայն:

Այս ճառական ձեւը, այս ուսած ու փրուած ոճը, այս անմիտ բառերից կազմուած լեզուն այնպէս կապել ու կաշկանդել էր ամենին, որ տաղանգաւոր մարդիկ անգամ գեռ այս դարու առաջին կեսին մեծ դժուարութիւն, մանաւանդ թէ երկիւղ էին կրում ազատուելու նորանից հասարակական կարծիքի դատապարտութեան տակ չընկնելու համար: Այսպէս, օրինակի համար, Խ-

Երեկին յուսահատված մնացած եօթը մանէթն էլ թողնելով դուրս գնաց իր չար բաղը անխելութիւն:

Իհարկէ հարկաւոր չէ էս տեղ նկարագրել թէ երեկին տուն գնալով, տեսաւ իր երկու մանր քրոջ որոնք իրանց ծնողով Թիւրքանում էին պատերը... Ինչ հարկաւոր է ասել, թէ մտեւը աղբաւ հարեանների հոգաւորութեամբ թաղուեցաւ: Ինչ հարկաւոր է ասել, թէ եղպիսի ցաւալի դէպքերում պ. Բարի-պտուղի պարտքում վերցրած օղտը մանէթը, գուցէ հարկւր մանէթի միւթիւնութիւն խելք որը երեկանիցն է: Ես բոլորը չնչին բաներ են համարում աշխարհիս մէջ: Բայց ինչ որ չնչին չը պէտք է համարել, էդ էնէ, որ իմանայինք, թէ յիշաւի պ. Բարի-պտուղի վարմունքով էս մարդը արքայութիւն գնաց թէ չէ:

Մի ուրիշ օրինակ էլ: Իմ թափառելու տեղերիս համար, ես ունիմ ֆէլիէտոնիստի երեք սարսափելի դէմք: Առաջինի անունն է—հետաքրքրութիւն, երկրորդինը—աջ և ձախ խփել, իսկ երրորդինը—ուրբի չը ինչպիսի:

Նորերումս ժողովրդի մինչի գլուխ զինավառուած դուրս եկայ փողոցը:

Գլխից մինչի ոտքն էլ զինավառուած հանգիւ պում է ինձ պ. Սուտ-փափափողը:

Ահա այդ նրա գլխաւոր տարն է, որով ցրց է տալիս միւս անխելութիւն մի կողմից իր աչքի կարճատեսութիւնը, բայց միւս կողմից մաքի չափազանց հեռատեսութիւնը: Շեռազան նրա սաղաւարտն է իսկ շան կաշիս ձեռնա-չափիկը (перчатки) է նրա զիւցազնական նշանը, քնքրել սուր մօտ քնքրել երեւալու համար: Կիսա-ոսնամանների (полусапожки) ճոճոցը է նրա զինաւորական մարզը, որը դիմում է թանգաղին ժամանակը չը կորցնելու համար կամ











